

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Արդեն գեղեցիկ ավանդություն է դարձել, որ ամեն տարի ԱՄՆ-ից Մայր Աթոռ և մայր հայրենիք են գալիս, որպես ուխտավոր, Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպության անդամները: Գալիս են ուխտի և աղոթքի, գալիս են հոգեպես վերըստին ծնվելու որպես հայ, ներշնչվելու հայեցի ոգով, գալիս են տեսնելու Ս. Էջմիածինն ու Հայաստանը, հրդեհվելու հայրենասիրությամբ և այդ կրակը տանելու հետու՝ իրենց քույրերին ու եղբայրներին, և ինչու չէ՝ նաև՝ աշխարհասփյուռ ու տարագիր հայության:

Այս միջոցառումը հետապնդում է բարի և հայրենաշունչ նպատակ. այն է՝ պահպանել հայեցի ոգին և կապը Ս. Էջմիածնի ու մայր հայրենիքի և սփյուռքի հայ երիտասարդ, զարգացող սերնդի միջև:

Ծանոթանալով հայրենիքին, հայ մշակույթին, վերազարթնում են նրանց մեջ հայի ոգին, հայրենասիրության զգացումն ու ազգային հպարտությունը, որոնք այնքան կարևոր են սփյուռքահայությանը, հայրենի հողից հեռու նրա մղած մեծ կռվում՝ հանուն հայության:

Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպության այս տարվա խումբը՝ թվով տասնմեկերորդը, Վեհափառ Հայրապետի հրավերով, այս տարի ևս ուխտի եկավ Ս. Էջմիածին ու մայր հայրենիք՝ առաջնորդությամբ Վեստ Չեստր եկեղեցական համայնքի Ս. Հակոբ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գարեգին քահանա Գասպարյանի: Երիտասարդները հյուրընկալվեցին Բյուրականի «Հայկաշէն» ամառանոցում:

Հունիսի 12-ը անմոռանալի օր էր նրանց համար: Այդ օրը նրանք միշտ պիտի հիշեն իրենց կյանքում: Հայրենիքից հեռու մի խումբ հայ երիտասարդներ, որոնք շատ քիչ գիտեն հայերեն կամ վատ են խոսում, առաջին անգամ այդ օրը ոտք դրեցին հայրենի հողի վրա, իրենց զգացին իրենց տանը, բարեկամների շրջանում: Սրտերը

ուշում էին հպարտությամբ, արցունքները հորդում էին հոգու բերկրանքից...

Հուլիսի 6-ին Վեհարանի զովաշունչ պարտեզում նրանք հանդիպում ունեցան Հայոց Հայրապետի հետ: Ետևում էին մնացել ու քաղցր հուշ դարձել հայոց լեզվի և հայագիտական առարկաների դասավանդությունները, մայր հայրենիքում այցելությունները՝ մշակույթի օջախներին ու պատմական հուշարձաններին, արշավները դեպի հայ վանքերն ու հայրենի բնաշխարհը: Հոգիները հարստացած, հայրենիքի մասին շատ-շատ բան տեսած ու սովորած, տպավորություններով լեցված երիտասարդները տխուր էին: Եկել էր պահը, երբ ակամա պետք է բաժանվեին հարազատ վայրերից, հարազատ դեմքերից:

Երիտասարդները այդ օրը եկել են իրենց երախտագիտությունը հայտնելու Հայոց Հայրապետին, որը հայրաբար հովանավորել է և բարեխղճորեն հետևել իրենց ողջ ուխտավորության ընթացքում: Եկել են ստանալու օրհնությունը Հայոց Հայրիկի: Եկել են երախտագիտության անսահման զգացումով, իրենց սիրտը բանալու, մտքերը կիսելու Հայոց Հայրապետի հետ: Զէ՞ որ շատ բան են սովորել: Եկել են սովորածը վերադարձնելու, անշահախնդիր բաժանելու բոլորին, բոլորին...: Արդեն լավ են խոսում հայերեն. արդեն կարդում են հայերեն. արդեն երգում են հայերեն:

Տխուր են, որ բաժանվում են, բայց ցույց չեն տալիս, որ չվշտացնեն Հայոց Հայրիկին: Տխուր է նաև Հայոց Հայրիկը, բայց ցույց չի տալիս, որ չվշտացնի իր վերածնված զավակներին:

Վեհափառ Հայրապետը Իր բարիգալբատյան ողջույնից հետո Իր խոսքը ուղղեց ուսանողներին հետևյալ խրատական ճառով:

Բնական է, որ սիրեք ձեր ծննդավայրը՝ Ամերիկան, բայց նաև պիտի կապված լինեք մայր հայրենիքին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, որը հոգևոր կենտրոնն է Հայ Եկեղեցիին և այն ուժը, որ կհամախմբե բոլորին: Հայ Եկեղեցին է միայն, որ անկախ է գաղափարական, կուսակցական այլևայլ հոսանքներե, վեր է անձնական նեղ և անցողական խնդիրներե և բարձր է անհատական շահերե: Հայ Եկեղեցին մեկ նպատակ ունի միայն՝ հայ ժողովրդի հոգևոր, բարոյական և ազգային նկարագրի կերտումը: Եկեղեցվո շնորհիվ մենք կպահպանենք մեր հոգին, մեր լեզուն, մեր հայկական դիմագիծը: Մայրենի լեզուն, հատկապես, շատ կարևոր է հայ մնալու և հայու նկարագիրը չկորսնցնելու համար:

Ամերիկայի Միացյալ Նահանգաց մեջ, բարեբախտաբար, դուք ունիք հայ լեզուն սովորելու հնարավորությունը: Միացյալ Նահանգաց մեջ ապրող ամեն մեկ ժողովուրդ իր ազգային սովորությունները լավ է, որ պահպանե: Այդ ավելի գեղեցիկ տեսք կուտա ամերիկյան հայրենիքին և ավելի եռանդ ու ուժ կուտա երկրի քաղաքացիներուն իրենց ուժերը անմասն ներդնելու երկրի զարգացման գործի մեջ: Ապրեցեք Միացյալ Նահանգաց մեջ, բայց ապրեցեք պատվավոր հայու պես և պահպանեցեք ձեր սուրբ հավատքը և ձեր մայրենի լեզուն:

Մենք կհավատանք Աստուծո զորության, կհավատանք Քրիստոսի շունչին, որ իջավ այստեղ՝ Ս. Էջմիածին, որ կներշնչե մեզ ու կմղե բարին գործելու:

Կաղոթեմ, որ երթաք այս սուրբ զգացումներով և նորեն այցելեք Մայր Աթոռ, արդեն ավելի մեծցած ու հասունացած, այս անգամ, թերևս, ձեր զավակներուն հետ միասին:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով»:

Այնուհետև Տ. Գարեգին քահանան իր շնորհակալության խոսքը ուղղեց Վեհափառ Հայրապետին, որ Իր բազմազբաղ ժամանակի մի մասը տրամադրում է երիտասարդներին, Իր փորձված ու իմաստուն խորհուրդներով խրատում նրանց, որոնց համար այս հանդիպումը Վեհափառ Հայրապետի հետ պատիվ է և մեծ ոգևորություն:

Ապա ուսանողության անունից խոսք առավ Գևորգ Ոսկանյանը.

«Վեհափառ Հայր.

Խնդրում եմ, թույլ տվեք ասելու, որ շատ ուրախ եմ, որ ես ընտրվել եմ Ամերիկահայ Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպության կողմից՝ ուղղելու մեր խորին շնորհակալություններ Ձեզ, Ձեր հայրական հոգածության համար:

Այս մեկ ամիսը, որ խումբը գտնվում էր մայր հայրենիքում, Ձեր հայրական հոգատարությունն էր վայելում:

Վեհափառ Տեր, այս մեկ ամսվա ընթացքում մենք վայելեցինք Հայրենիքը՝ տեսանելով բազմաթիվ ճարտարապետական կոթողներ, լսեցինք հայկական օպերա, համերգներ, որոնք բոլորն էլ մեզ անսահման հաճույք պատճառեցին:

Հայրենիքում ամեն օր հարատևորեն մեզ մեր պապենական լեզուն՝ հայերեն դասավանդեցին, սովորեցինք հայկական ա-

վանդական պարեր, հայկական երգ ու երաժշտություն:

Մենք 18 ամերիկահայ երիտասարդներ այստեղ՝ հայրենիքում շատ բաներ տեսանք, շատ բան սովորեցինք, և նոր, հայրենասիրորեն մկրտված մենք կվերադառնանք Ամերիկա և կաշխատենք ամեն հայի հոգում սերմանել սերը դեպի Հայ Եկեղեցին, դեպի Սուրբ Էջմիածինը, դեպի Ձերդ Վեհափառության պաշտելի Անձը և մայր հայրենիքը:

Վեհափառ Տեր, մենք այցելեցինք մեր հայրենիքը ոչ թե որպես սովորական զբոսաշրջիկներ, այլ որպես հայ ուսանողներ, որոնք ծարավ են լսելու, տեսնելու և սովորելու ամեն բան՝ հայրենի հողի մասին: Ինչպես ասել է մեր սիրելի գրողներից մեկը. —«Հայաստանում չկա մեկ անգրագետ քար»: Եվ մենք եկել ենք Հայաստան՝ մեր հայրենիքը, որ խոսենք, լսենք մեր քարերին, որ նրանք մեզ պատմեն իրենց հինավուրց պատմությունը՝ Հայկ ու Բելից մինչև ներկայիս օրերը՝ Հայաստանի փառքը:

Վեհափառ Տեր, իմ և ընկերներիս կողմից խորին և խորին շնորհակալություններ եմ հայտնում Ձերդ Սրբությանը. երախտապարտ ենք, որ այս առիթը տվիք մեզ՝ այցելելու Մայր Աթոռ և հայրենի սրբազան հողը: Մեր սրտերը կապված են Ձեզ հետ և մեր աղոթքներում ցանկանում ենք Ձեզ երկար և երկար առողջ կյանք»:

Խոսեց նաև Հռիփսիմե Վոլոհոջյանը.

«Հայրենիք գալե առաջ բնականորեն կսիրեինք Մայր Հայաստանը, սակայն հայրենիքը առաջ մեզի համար անմարմին խոսք մըն էր, անիրական գաղափար մը: Հայրենիքը կճանչնայինք նկարներով և մեզ հասնող լուրերով: Սակայն հիմա, շնորհիվ Ձեր հայրական կարգադրության, Վեհափառ Տեր, իրականություն դարձան մեր իղձերը, մեր լանձները:

Մենք եկանք հայրենիք, ապրեցանք անոր կյանքով, անոր մեջ, անոր սիրով: Մեր մեջ ընդունեցինք իրական հայրենիքը և ավելի սիրեցինք զայն»:

Երիտասարդներից ամեն ոք ցանկանում էր իր շնորհակալական ջերմ խոսքն ասել Վեհափառ Հայրապետին: Հուզիչ էր Օվսաննա Մինասյանի խոսքը՝ դարձյալ ուսանողության անունից.

«Ամերիկայի Միացյալ Նահանգներու Հայ Եկեղեցվո Երիտասարդաց Կազմակերպության կողմե կուզեմ շնորհակալություն հայտնել Ձերդ Սրբության՝ Ձեր այնքան ազնվության համար, որովհետև արտոնեցիք մեզ դառնալու Ձեր հյուրերը՝ Ս. Էջմիածնի և «Հայկաշեն»-ի գեղեցիկ ամառանոցին մեջ:

Երբ Հայաստան հասանք, մեր աչքերուն մեջ կային ուրախության արցունքներ: Վերադարձանք մեր պապերուն երկիրը. վերադարձանք մեր տունը:

Նույն օրը, երեկոյան, Արարատը իր գեղեցիկ տեսարանով հրապուրեց բոլորիս: Տեսարան մը, որ երբեք չպիտի մոռնանք:

Անցնող ամսվա ընթացքին մենք շատ բաներ տեսանք և շատ բաներ սորվեցանք: Բյուրականի, Դիլիջանի և Գեղարդի այնքան հրապուրիչ տեսարանները և մեր մայր հայրենիքը ու քաղաքամայր Երևանը տեսնելով, զգալով, իրապես սիրեցինք մեր բոլորին Մայր Հայաստան աշխարհը:

Ներկա գտնվելով Ս. Էջմիածնի տաճարեն ներս տեղի ունեցող սուրբ պատարագին և եկեղեցական տոներուն, հանդիսություններուն, ս. հաղորդություն առինք և անկասկածորեն ունեցանք գեղեցիկ առիթը՝ լեցվելու քրիստոնեական ու հայկական զգացումներով:

Մենք միշտ պիտի հիշենք մեր բոլոր արշավները, հատկապես դեպի Գեղարդի վանքն ու լեռները և Սևանա լիճը:

Պետք է խոստովանինք, որ այս այցելությամբ ճանչցանք մեր մայր հայրենիքը, ծանոթացանք մեր ժողովրդի կյանքին:

Բոլորս հպարտ ենք, որ հայ ենք, որուն համար այս բացառիկ առիթը ունեցանք հրավիրվելու Ձերդ Սրբության կողմե, ոչ որպես Ձեր հյուրերը, այլ որպես Ձեր հարազատ զավակները:

Այժմ, Վեհափառ Տեր, անգամ մը ևս մեր շնորհակալությունը հայտնելով Ձերդ Սրբության, թույլ տվեք համբուրել Ձեր Սուրբ Աջը և ստանալ հայրական Ձեր օրհնությունը»:

Վերջում ամերիկահայ երիտասարդները հանդես եկան գեղարվեստական փոքրիկ ծրագրով, երգեցին Հայաստանում սովորած իրենց հայկական խմբերգերը. «Հայ Եկեղեցու քայլերգ», «Հայ ապրինք եղբարք», «Կիլիկիա», «Էրեբունի-Երևան», «Հայաստան աշխարհ», «Ով մեծասքանչ դու լեզու» և այլն:

Հանդիպումն ավարտվեց ջերմությամբ երգված Հայրապետական մաղթանքով:

Երեկոյան, համբուրելով Վեհափառ Հայրապետի Աջը և ստանալով Նրա հայրական օրհնությունները, երիտասարդները հրաժեշտ տվեցին ու մեկնեցին Մայր Աթոռից՝ հաստատ խոստանալով այսուհետև հայ ապրել մարդկության մեջ, որովհետև հայ է կնքել իրենց պատմության էջը:

ՀԱՅԿ ՍՐԿ. ՁԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Гос. Библиотека Арм.ССР им. А. Мясникяна